ՔՐԻՍՏԻՆԵ ԿՈՍՏԻԿՅԱՆ

ԴԱՐԱԲԱՂԻ 18-ՐԴ ԴԱՐԻ ՎԵՐՋԻ ՔԱՂԱՔԱԿԱՆ ՊԱՏԱՄՈՒԹՅԱՆ ՄԻ ՔԱՆԻ ՀԱՐՑԵՐ

Կուր-Արաքսյան հարթավայրում բնակվող մահմեդական քոչվոր ցեղերը 18-րդ դարի 40-ականների վերջին միավորվում են ջևանշիր ցեղի առաջնորդ Փանահ խանի շուրջ և ստեղծում մահմեդական խանություն, որը աստիճանաբար իր իշխանությունը տարածելով շրջակա մի շարք գավառների վրա՝ դառնում է իր ժամանակի ուժեղ խանություններից մեկը: Օգտվելով հայ մելիքների անհամերաշխությունից, Փանահ խանը իրեն է ենթարկում նաև հարևան Խամսայի հայկական մելիքությունները, որը Իրանի Նադիր շահի օրոք (1735-1747թթ) պետության առանձին վարչական միավորներից էր[1]: Իրանի պետության թուլացման ու նրա գահին հավակնողների միջև երկարատև գահակալական կռիվների հետևանքով, բացի Ղարաբաղից, Անդրկովկասի ու Արարատյանի տարածքներում 1747թ. հետո անկախություն են ստանում և ստեղծվում հետևյալ պետական կազմավորումները՝ Վրաստանի թագավորությունը, Երևանի, Նախիջևանի, Մակվի, Ղարադաղի, Ուրմիայի, Գանձակի, Ղուբայի, Քաքվի, Շիրվանի, Շաքիի, Թալիշի, Արդեբիլի, Մարաղայի, Սոլուջ-Բուլաղի խանությունները[2]: Խամսայի մելիքների երկարատև պայքարը մահմեդական խանների դեմ արտացոլված է տվյալ ժամանակաշրջանի Ղարաբաղի պատմությանը նվիրված գրեթե բոլոր՝ հայկական[3] և օտար[4] սկզբնաղբյուրներում, ինչպես նաև հայ-ռուսական վտիտարաբերություններին վերաբերող փաստագրական նյութերում[5]: Այդ պայքարի պատմությունը լավագույնս ուսումնասիրված է Ա. Հովհաննիսյանի 18-րդ դարի հայ ազատագրական շարժումների պատմությանը նվիրված աշխատություններում[6]:

Ավելի քիչ է ուսումնասիրված Ղարաբաղի մահմեդական խանության պատմությունը, որի վերաբերյալ սաստ տեղեկություններ կան պատմական սկզբնաղբյուրներում: Ղարաբաղի խանության քաղաքական պատմության

ստանձին հարցերին են անդրադառնում նաև պարսկալեզու սկզբնաղբյուրները[7], որոնց մեջ կարևոր տեղ է զբաղեցնում Իրանի պալատական պատմագիր Ռեզակուլի խան Հեդայաթի «Ռոհուզաթ-աս-Սաֆա-յե Նասերի» (պրսկ.-«Անբիծ մաքրության այգի») աշխատությունը: Հայ ժողովրդի պատմությունը՝ սկսած հնագույն ժամանակներից մինչև 1828թ. միահյուսված է Իրանի պատմության հետ, ուստի «Ռոուզաթ-աս-Սաֆայում» պարունակվող հավաստի տվյալները որոշ չափով ճշգրտում ու լրացնում են 18-19-րդ դարերի Արևելյան Հայաստանի պատմությունը:

Սույն հոդվածում նպատակ ունենք 18-րդ դարի վերջի Անդրկովկասի պատմությունն ընդգրկող այլ սկզբնաղբյուրների հաղորդումների հետ համադրության միջոցով քննելու «Ռոուզաթ-աս-Սաֆայի» պարունակած տեղեկությունները Իրանի Աղա Մուհամմադ խան Ղաջարի կառավարման շրջանի քաղաքական այն դեպքերի մասին, որոնք վերաբերում են նաև հայ ժողովրդի պատմությանը: Ռեզակուլի խանի հայրը եղել է Աղա Մուհամմադ խանի, այնուհետև նաև՝ Ֆաթհալի շահի գանձապետը՝, որի շնորհիվ հեղինակը մանրամասն տեղեկություններ է հաղորդում Իրանի 18-րդ դարի վերջի քաղաքական անցուդարձի վերաբերյալ: Ռեզակուլի խանը՝ ևս երկար տարիներ ծառայել է Իրանի Ֆաթհալի, Մուհամմադ ու Նասրեդդին շահերի արքունիքներում և մեծարվել «քանաստեղծների արքա» (ամիր-աշ-շուարա) տիտղոսով: Ռեզակուլի խան Հեդայաթը հեղինակ է ավելի քան 15 գրական ու պատմական աշխատությունների: Իր «Ռոուզաթ-աս-Սաֆա-յե Նասերի» պատմական աշխատությունը հեղինակը գրել է շարունակելու համար Իրանի 15-16-րդ դարերի պատմագիրներ Սիրիանդի «Ռոուզաթ-աս-Սաֆա» և Խանդեմիրի «Հաբիբ-աս-Սիյար» աշխատությունները[9]: «Ռոուզաթ-աս-Սաֆա-յե Նասերի» աշխատության 3 հատորներում շարադրված է Իրանի Սեֆյան, Աֆշարական, Զենդյան ու Քաջարական թագավորական տների ժամանակաշրջանի պատմությունը մինչև Նասրեդդին շահի գահակալման 1274 հ. թ. (հմպտ. 1857/1858թ.):

Ղարաբաղի խանության հիմնադիր Փանահ Ալի խանը իր իշխանությունը տարածում է ամբողջ Արցախ նահանգի, Փայտակարան նահանգի Կուր-Արաքսյան հովտում գտնվող մասի և Ուտիքի ու Սյունիքի առանձին շրջանների վրա[10]: Դրանց թվում էին Զանգեզուրի, Բարգուշատի, Ղափանի, Չավնդուրի և Սիսիանի՝ շրջանների որոշ բնակավայրեր, որոնցից էին Մեղրին, Տաթևը, Հաղիծորը և Խնձորեսկը[11]: Ղարաբաղի խանները, ջանալով ընդարձակել իրենց ազդեցության շրջանակները, հանդես էին գալիս հարևան թյուր խանությունները իրենց ենթարկելու հավակնություններով: 18-րդ դարի 50-ական թվականներին Ղարաբաղի և Վրաստանի միջև ընդհարումներ էին տեղի ունենում Գանձակի խանության վրա գերիշխանություն հաստատելու համար, որոնք շարունակվում են մինչև 70-ականների վերջը[12]: Միաժամանակ Փանահ խանը վերջ է տալիս իր տարածքների նկատմամբ Շաքիի Հաջի Չելեբի խանի ոտնձգություններին[13], 1757թ. ետ մղում Իրանի Մուհամմադ

Հասան խանի[14], 1757-1762թթ.՝ Ուրմիայի Ֆաթհուղի խան Աֆշարի[15] արշավանքները Ղարաբաղ:

Ղարաբաղի խանությունը հատկապես ուժեղանում է նրա Իբրահիմ Խալիլ խանի իշխանության տարիներին (1762-1806թթ.): 1780-1781թթ. Ղարաբաղի ձեռներեց խանը արշավանքներ է կազմակերպում դեպի Թավրիզ ու Խոյ[16]: Վերջինիս Ահմեդ խանը շուտով դառնում է Իբրահիմ խանի դաշնակիցը և նրա հետ միասին 1785թ. կրկնում արշավանքը դեպի Թավրիզ[17]: 18-րդ դարի 80-ական թվականներին նրանից կախման մեջ էին գտնվում Գանձակի, Ղարադաղի, Մեշքինի ու Նախիջևանի խանությունները, իսկ Ավարիայի, Արդեբիլի ու Խոյի խաները նրա դաշնակիցներն էին[18]: 1778թ. Վրաստանի թագավոր Հերակլը ու Իբրահիմ խանը, համաձայնության գալով, գրավում են Գանձակը, կալանավորում այնտեղի Մահմեդ խանին և ընտանիքով հանդերձ տանում նրան Շուշի[19]: 1782թ. տվյալներով թե՛ Ղարաբաղի Իբրահիմ խանը, և թե՛ Վրաստանի Հերակլ թագավորը իրենց ներկայացուցիչներին են նշանակում Գանձակում և հարկագանձումներ կատարում[20]: Այդ շրջանում բազմիցս ընդհարումներ են տեղի ունենում Իբրահիմ խանի և Ղուբայի Ֆաթհալի խանի միջև, որը Արևելյան Անդրկովկասում Ղարաբաղի խանի միակ մրցակիցն էր[21]:

1780-90-ական թվականներին, չնայած հայրենիքում դիրքերի թուլացմանը, Ղարաբաղի հայ մելիքները իրենց ենթակա արցախահայ բնակչությամբ շարունակում էին կարևոր դեր խաղալ երկրի քաղաքական կյանքում և մահմեդական խաները չէին կարող հաշվի չնստել այդ փաստի հետ: 90-ական թվականներին Խամսայի մելիքներն էին՝ Վարանդայի Մելիք-Ջումշուդ Շահնազարյանը, Դիզակի Մելիք-Աբաս Եգանյանը, Խաչենի Մելիք-Ալլավերդին՝ Միրզախանի որդին, Ջրաբերդի Մելիք Ռուստամը՝ յուզբաշի Ալլահվերդիի որդին և Գյուլիստանի Մելիք-Ֆրիդուն Բեգլարյանը՝ իրենց հպատակ շուրջ 60000 տուն հայ ազգաբնակչությամբ[22]: Ղարաբաղի թե՛ Փանահ և թե՛ Իբրահիմ խաները իրենց ռազմական արշավանքների ժամանակ օգտագործում էին հայ մելիքների ռազմական ուժերը. «[Փանահ] խանն Շուշու ի ունիլն պատերազմ առ դքացի խանսն որպես զմելիքսն և զօրս նոցա [Սիսիանի, Ղափանի և այլն] նոցա, նմանապես և զսոյն գիւղացիսն զինուորեցուցանէ տալ պատերազմն թշնամեաց իւրոց, որովք արարեալ է բազում պատերազմունս յաղթականութեամբ»[23]: Փանահ խանը իրեն ենթարկելով Նախիջևանի, Սիսիանի ու Ղափանի կողմերի մի շարք բնակավայրեր՝ անհրաժեշտության դեպքում այն վայրերից ստանում էր 1000-ական զինվոր[24]: 18-րդ դարի վերջին, բացի Խամսայի վերը նշված հինգ հայկական մելիքություններից, հիշատակվում են նաև Սյունիքի և Ուտիքի որոշ շրջաններում իշխող մելիքների անունները՝ «Յարութիւն մելիք Մնացականեանը Գետաշինոյ, մելիք Գասպար Յաւրոյ Կանջայ քաղաքի, մելիք Գաբրիել Յոսկանապատու և այլն, թող զՁակամն Շամսատին և Շամքոռու, թե որքան մելիքներ կան մնալոց... նաև մելիքներն Ղափանու Դավիթ մելիք Բարխուտարեան, Տեղու

և Յոսեփ Յոհաննեան Զանկազոռու և այլն»[25]:

1769թ. Վրաստանի Հերակլ թագավորի կողմից ռուսական կառավարությանը հղված մի նամակում նշվում է Ղարաբաղում 7 հայկական իշխանությունների գոյության մասին: Ամենայն հավանականությամբ այդտեղ հաշվի են առնված նաև Ղարաբաղի խանության մեջ մտած Սյունիքի շրջանների իշխանությունները: Ընդ որում, այդ փաստաթղթում մատնանշվում է այն փաստը, որ «հայերի ռազմական ուժերը հասնում են 4500-ի, իսկ ջավանշիրցիներինը՝ (քոչվոր ցեղեր) 2500-ի: Բայց քանի որ հայերի միջև միասնություն չկա, ուստի ջավանշիրցիները նրանց իրենց իշխանությանն են ենթարկել»[26]:

Այս վկայությունները ցույց են տալիս, որ Ղարաբաղի խաները իրենց արտաքին ու ներքին քաղաքականության մեջ հարկադրված էին հաշվի առնել հայ մելիքների ու նրանց հպատակ արցախահայության ռազմական ուժերը: Ելնելով իրենց երկրում հայ ազգաբնակչության ունեցած կարևոր քաղաքական ու տնտեսական դերից՝ նրանք մեծ ճկունություն էին հանդես բերում՝ երկու հզոր պետությունների՝ Ռուսաստանի ու Իրանի նկատմամբ վարած քաղաքականության մեջ[27]: Դեռ ավելին, նրանք լայնորեն օգտագործում էին հայ մելիքությունների ուժերը իրենց ռազմական ընդհարումների ժամանակ: Հայ մելիքների մարտական ուժերը հատկապես մեծ դեր են խաղում Իբրահիմ խանի Իրանի Աղա Մուհամմադ խանի դեմ մղած կռիվներում:

Վրաստանը 1783թ. կնքած պայմանագրով անցնում է Ռուսաստանի հովանավորության տակ, որից հետո ռուսական կառավարությունը ջանում էր իր գերիշխանությունը տարածել Անդրկովկասի մյուս երկրների և մասնավորապես Ղարաբաղի վրա: Մյուս կողմից Իրանում ուժեղացել էր Աղա Մուհամմադ խանը, որը իր հերթին ձգտում էր վերականգնել Իրանի տիրապետությունը իր նախկին անդրկովկասյան տիրույթների վրա: Ղարաբաղի խանը, զգուշանալով Ռուսաստանի ու Իրանի կողմից օրեցօր ուժեղացող վտանգից, ամրացնում էր իր դիրքերը և նախապատրաստվում պաշտպանության: 1783թ. նա իր մոտ է կանչում ազգականներին և իր դաշնակից Մելիք-Շահնազարին՝ հայտարարելով, որ մտադիր է վերանորոգել ու ամրացնել Շուշի քերդը: Քերդի պարիսպների վերակառուցումը անհրաժեշտ էր նաև նրա բնակչության թվի մեծացման պատճառով: Իր այս մտադրությունը իրագործելու համար մելիքներից պահանջում է 100-ական մարդ[28] և, քանդելով բերդի հին պարիսպները, «հմուտ վարպետների նախագծով 1 վարս (հնցծ. ռուս. «ՉԱՐՏՅՈ» երկարության միավոր, հավասար է մոտ 500 սաժենի կամ 1կմ) հեռու կառուցում ավելի ամուր ու բարեշեն պարիսպներ»: Շուշի քերդի վերակառուցումը ավարտվում է 1789թ.[29]: Պետք է նշել, որ զուր չէին Ղարաբաղի խանի անհանգստությունն ու ռազմական պատրաստությունները: Շուշիի բարենորոգությունը օգտակար է լինում Իրանի Աղա Մուհամմադ խանի հարձակումներից պաշտպանվելու հարցում:

Աղա Մուհամմադ խանը 18-րդ դարի 90-ական թվականների սկզբից լուրջ քայլեր է ձեռնարկում Իրանի գերիշխանությունը Ատրպատականի և

Անդրկովկասի անկախացած երկրների վրա հաստատելու համար: Աղա Մուհամմադ խանին, որը չէր պատկանում թագավորող տոհմին, գահ բարձրանալու համար անհրաժեշտ էր վերը նշված երկրների և հատկապես Վրաստանի վալիի հպատակությունը: Իրանի շահերի թագադրության ժամանակ պարտադիր էր Իրանի 4 վալիների՝ Արաբիստանի, Լուրիստանի, Վրաստանի ու Քրդստանի փոխարքաների ներկայությունը[30]:

Վերը նշված պատճառները դրդում են Իրանի շահը դառնալու հավակնություններ ունեցող Աղա Մուհամմադ խանին 1791թ. 10000-անոց զորքով շարժվել դեպի Թավրիզ և պահանջել Ատրպատականի խաների հպատակությունը: Նրա զորքերը պարտության են մատնում Թավրիզի կառավարիչ Սադեղ խան Շադաղիի զորքերին[31]: Վերջինս ապաստանում է Ղարաբաղում՝ Իբրահիմ խանի մոտ: Ջան Մուհամմադ խանի գլխավորությամբ Թալիշի խանություն ներխուժած պարսկական զորագունդը ուժեղ դիմադրության է հանդիպում և նահանջում: Սուլեյման սարդարի գլխավորած պարսկական զորքը գրավում է Ահար ամրոցը, որից հետո հաստատվում Գոլամբարի դաշտում[32]: Ըստ Ռեզակուլի խանի, հպատակություն հայտնելու նպատակով ներկայանում է Խոյի Հուսեյն Ղուլի խան Դումբուլին և նշանակվում Ատրպատականի կառավարիչ: Հնազանդություն են հայտնում նաև Մարաղայի Ահմեդ խանը, Ղարադաղի Մուսթաֆի Ղուլի խանը, Նախիջևանի Քյալբասալի խանը ու Շահսևան ցեղի առաջնորդը[33]: Աղա Մուհամմադ խանը հպատակության է հրավիրում նաև Երևանի, Ղարաբաղի, Գանձակի ու Շաքիի խաներին: Երևանի Մահմեդ խանը, վախենալով անձամբ ներկայանալ՝ Աղա Մուհամմադի մոտ է ուղարկում իր եղբորն ու մերձավորներից մեկին: Գանձակի ու Շաքիի խաները բավարարվում են նվերներ ուղարկելով, իսկ Ղարաբաղի Իբրահիմ խանը հրաժարվում է անգամ ընծաներ առաքելուց[34]: Շուտով Աղա Մուհամմադ խանը ստիպված է լինում հեռանալ Իրանի կենտրոնական նահանգները՝ իր դեմ ծագած խռովությունները ճնշելու համար:

Ղարաբաղի Իբրահիմ խանը Աղա Մուհամմադ խանից պաշտպանվելու համար դիմել էր Ավարիայի Օմար խանի օգնությանը: Վերջինս անմիջապես արձագանքում է իր դաշնակցի կանչին և զորքով ժամանում Ղարաբաղ: Սակայն Աղա Մուհամմադ խանի զորքերը արդեն հեռացել էին Թավրիզի մոտակայքից: Իբրահիմ խանը լեզգիների զորքին գործունեության ասպարեզ տրամադրելու ու նրանց համար հարուստ ավար հայթայթելու նպատակով ռազմական արշավանք է ձեռնարկում դեպի Նախիջևան: 1791թ. նոյեմբեր-դեկտեմբեր ամիսներին Ղարաբաղի խանի՝ դեպի Նախիջևան կատարած արշավանքին մասնակցում է լեզգիների 3000-անոց գունդը: Նախիջևանի Քյալբասալի խանը Երևանի ու Խոյի խանություններից ուղարկված ջոկատների օգնությամբ պարտության է մատնում Իբրահիմ խանի գլխավորությամբ իր տարածքը ներխուժած զորքերին[35]: Մ.Յ.Ներսեսովը այս դեպքերի վերաբերյալ հաղորդում է որոշ մանրամասներ, որոնցից հայտնի է դառնում նաև հայ մելիքների մասնակցությունը այդ արշավանքին.

«Ղարաբաղի հեծելազորի, վարձու հետևակազորի միջոցով [խանը] վճռում է պատժել Քյալբասալի խանին և դեպի այն կողմերն է շարժվում: Ղարաբաբա կոչված վայրում կանգ է առնում և զորքն ուղարկում [շրջակա] գյուղերն ասպատակելու: Ղարաբաբա գյուղը շրջապատում է: Քյալբասալի խանը նախօրոք Երևանի կառավարչից օգնություն էր խնդրել: Վերջինս էլ քուրդ և այլ հեծյալների մի խումբ էր նրան օգնության ուղարկել: Վերոհիշյալ բնակավայրում հակառակորդները հանդիպում են և Քյալբասալի խանը որոշ ընդհարումներից հետո խորամանկորեն փախուստի է դիմում: Օմար խանն այս տեսնելով առանց երկնչելու սկսում է հետապնդել նրան.:. Այդ ժամանակ իրենց քաջությամբ հայտնի քրդական զիլան ու [թաթարական] ղարափափախ ցեղերը, կանգնեցնում են իրենց ձիերը և սրերը մերկացնելով լեզգիների վրա հարձակվում: Լեզգիները չկարողանալով դիմադրել նրանց՝ փախչում, հեռանում են: Իբրահիմ խանը, որն իր անկանոն հետևակազորը Ղարաբաղում էր թողել, ճարահատյալ մարդ է ուղարկում մելիքների ու յուզբաշիների մոտ և վերադարձի հրաման տալիս»[36]:

1793թ. Աղա Մուհամմադ խանը նորից անդրադառնում է Արևելյան Անդրկովկասի խանությունները հպատակեցնելու իր մտադրությանը: Ամռանը նա Թավրիզ է ուղարկում Առլեյման խան սարդարին 6000-ական զորքով, որի նպատակը տեղի բոլոր տիրակալներին և հատկապես Ղարաբաղի Իբրահիմ խանին հնազանդեցնելն էր[37]: Ըստ Ռեզակուլի խան Հեդայաթի «Ռոուզաթ-աս-Սաֆայի», Առլեյման խանին հաջողվում է գրեթե լիովին կատարել իրեն տրված հանձնարարությունը: Հպատակություն են հայտնում Սաղեղ խան Շաղաղին, Մարուաղայի Ահմադ խանը, Գանձակի Ջավադ խանը, Երևանի Մուհամմադ խանը և անգամ Ղարաբաղի Իբրահիմ խանը[38]: Իրանցի պատմագրի այս վկայությունը չի հակասում մյուս սկզբնաղբյուրների վկայություններին: Իբրահիմ խանը Աղա Մուհամմադ խանին ձևական հպատակություն է հայտնում և որպես երաշխիք նրան պատանդ հանձնում իր զարմիկ Աբդու Սամեդ բեկին՝ Սիրզա Վելի Քուհարլիի հետ, որը հայտնի էր իր պերճախոսությամբ[39]: Պատանդները, սակայն, Աղա Մուհամմադ խանի զորքերի կողմից Քերմանի պաշարման օրերին ինչ-ինչ պատճառներով փախուստի են դիմում, որից հետո բռնվում և սպանվում են[40]: Ռեզակուլի-խանի վկայությամբ, Իբրահիմ խանի ազգականի սպանությունը նոր թշնամություն է սերմանում նրա և Աղա Մուհամմադ խանի միջև: Ղարաբաղի խանը հրաժարվում է նոր պատանդ տալ ու հնազանդվել Աղա Մուհամմադ խանի իշխանությանը[41]:

1795թ. գարնանը Աղա Մուհամմադ խանը սկսում է իր առաջին արշավանքը դեպի Անդրկովկաս: Նա ժամանում է Արդեբիլ և սկսում ռազմական նախապատրաստություններ տեսնել: Սկզբնաղբյուրները տարբեր տվյալներ են հաղորդում Աղա Մուհամմադ խանի քանակի ընդհանուր թվի վերաբերյալ[42]: Ղարաբաղի Իբրահիմ խանը անհանգստացած դիմում է իր դաշնակից Վրաստանի Հերակլ թագավորի և Օսմանյան կայսրության օգնութ-

յանը[43]: Հեթակը Ղարաբաղ է ուղարկում 2000-անոց մի զորագունդ Ալեքսանդր արքայազնի գլխավորությամբ: Վերջինիս և Իբրահիմ խանի միացյալ ուժերը շուտով նեղ կիրճերում ջախջախում են արաքսյան հարթավայր ներխուժած Աղա Մուհամմադ խանի 4000-անոց զորագունդը[44]: Սակայն այս առաջին անհաջողությունը չի ընկճում Իրանի տիրակալին: Աղա Մուհամմադ խանը, որը կանգ էր առել Ղարաթիփե վայրում, շարունակում է ռազմական պատրաստությունները: Նրա հրամանով Մուսթաֆի խան Դավալուի գլխավորած զորագունդը ներխուժում է Թալիշի խանություն: Այնտեղ մեծ ավերածություններ են գործում ու գերիներ վերցնում, որից հետո արշավում նաև դեպի Շիրվան:

Ղարաբաղյան արշավանքը իրականացնելու համար Աղա Մուհամմադ խանը ստիպված էր նախ և առաջ վերանորոգել Խոդա-Աֆերինի կամուրջը, որը Իբրահիմ խանը նախօրոք քանդել էր տվել: Կամուրջի վերականգնումը տևում է 10 օր: Հուլիսին Աղա Մուհամմադ խանը զորավարներ Ալի Ղուլի խանի ու Ջաֆար Ղուլի խանի գլխավորությամբ 20000-անոց պարսկական զորքը ուղարկում է դեպի Երևան[45], իսկ ինքը իր բանակի գլխավոր ուժերով շարժվում դեպի Ղարաբաղ: Երևանի, Նախիջևանի ու Ղարաբաղի ահաբեկված բնակչության մի մասը սկսում է լքել իր բնակության վայրերը և հեռանում Վրաստան[46]: Հակոբ Զաքարյանցի վկայությամբ, Արցախում մնացած բնակչությունը արշավանքի նախօրյակին ամրանում է Ջրաբերդում, Ասկերանում, Շուշիում և լեռնային անմատչելի վայրերում[47]:

Որոշ տվյալների համաձայն Ղարաբաղի խանը հավաքում է մոտ 15000-անոց զորք ու տեղի ազգաբնակչության ակտիվ աջակցությամբ ուժեղ դիմադրություն ցույց տալիս պարսկական զորքերին[48]: «(Իբրահիմ) խանը հայտարարում է ժողովրդական պատերազմ. տեղի բեկերի կազմակերպած զորագնդերը ուժեղ հարվածներ են հասցնում Աղա Մուհամմադ խանի զորքերին», փակում պարենի ճանապարհները, վնասում բանակի գումակին: Այդ ջոկատները 2 խոշոր հաղթանակներ են տանում պարսկական զորքերի դեմ կռիվներում, խլում նրա գումակը[49]:

Ռեզակուլի խանի հաղորդած մանրամասն տեղեկություններից իմանում ենք, որ պարսկական զորքին ուժեղ դիմադրություն են ցույց տալիս Սյունիքի Խնձորեսկ ու Ղափան բնակավայրերում ամրացած հայությունն ու քոչվոր ցեղերը: Նրանց դեմ մեծ զորքով ուղարկվում է Մուսթաֆի խան Դավալուն, որը հարձակվում է նրանց ամրությունների վրա, գրավում և գերեվարում նրանց պաշտպաններից 500 հոգու: Ըստ Ռեզակուլի խանի «Մուհամմադ Վելի խանի և Ռեզակուլի խան Դավալուի գլխավորած զորագունդը գրոհում է հայերի ամրության վրա, գրավում այն, մեծ ավար ու գերիներ ձեռք բերում»[50]:

Իրանի պատմագրի կողմից արշավանքի այս փուլի հանգամանալից նկարագրությունը ցույց է տալիս, որ նախքան Շուշիի պաշարումը Աղա Մուհամմադ խանը հարկադրված էր հաղթահարել Ղարաբաղի ազգաբնակչության տարերային դիմադրությունը և միայն իր դիրքերը քիչ թե շատ ամրաց-

նելուց հետո պաշարել անառիկ ամրոցը: Շուշին պաշարելու նպատակով Աղա Մուհամմադ խանը մոտենում է ամրոցին մինչև 3 ֆարսանգ (1 ֆարսանգը = 6 կմ) և կանգ առնում Նաբաթ խան կոչվող դաշտում[51]: Օգոստոսին Սուլեյման խան Քաջարը և Մուսթաֆի խան Դավալուն 10000 հեծյալ զորքով շրջապատում են Շուշին: Հակառակորդների պահակագորայինները մարտի են բռնվում: Ի վերջո, իրանցիները հաղթում են «հայ և մահմեդական քաջերին, որոնք փախչում են ամրոց, կամ ամրանում նրա մոտակայքում»[52]: Ըստ Հակոբ Զաքարյանցի, արցախահայերը ապաստանում են «Շուշիի հարավային կողմում գտնվող մի քարայրում և այնքան ամրացնում այն, որ Իբրահիմ խանը այնտեղ է տեղափոխում իր գանձերը»[53]:

Վրաստանի Հեյակլ թագավորը իր մի նամակում հետևյալ կերպ է նկարագրում Շուշիի բերդի շուրջ տեղի ունեցող կռիվները. «Այնտեղի բնակչությունը նրանց [պարսիկներին] շատ էր անհանգստացնում մարդկանց ու անասուններ գողանալով: Դրա հետևանքով նա [Աղա Մուհամմադ խանը] չէր կարողանում կռվի մեջ մտնել նրանց դեմ»[54]: Նման փաստեր է արձանագրում նաև 19-րդ դարում գրված պարսկերեն «Ղարաբաղի պատմության» հեղինակ Միրզա Ջամալ Ջևանշիրը, որի վկայությամբ, չնայած երկարատև պաշարմանը, Աղա Մուհամմադ խանը այնուամենայնիվ չի կարողանում իր հսկայական զորքով անցնել Շուշիից 5 վերստ հեռավորության վրա գտնվող գետը և մոտենալ բերդին: «Ղարաբաղի հեծյալ և հետիոտն գնդերը, ցեղերի և գյուղացիների առաջնորդները, Վարանդայի, Դիզակի ու Խաչենի մահալների մելիքները մանր ջոկատներով հարձակվում էին ղզլբաշ զորքերի վրա, խլում նրանց ձիերն ու գրաստները, կողոպտում պարսկական զորքին հացահատիկ հասցնող քարավանները: Այնքան շատ անասուններ են խլում, որ Շուշիում մսի գինը խիստ ընկնում է»[55]:

Ամրոցի համար մղվող մարտերի նկարագրության մեջ Ռեզակուլի խանը հիշատակում է պարսկական զորքերի վրա Իբրահիմ խանի կազմակերպած մի քանի հարձակումների մասին[56]: Ամրոցի պաշտպանության հարցում Ղարաբաղի ազգաբնակչության ցուցաբերած համառությունը Աղա Մուհամմադ խանը փորձում էր ընկճել իրեն հատուկ դաժանությամբ: Նա հրամայում է ամրոցի պաշտպանների ձեռնարկած մի անհաջող գրոհից գերվածներից 100 եզգու կապկպած վիճակում նետել հակառակ կողմից պայտած ձիերի սմբակների տակ: Մակայն բերդի պաշտպանները պարտքի տակ չեն մնում: Հաջորդ գիշերն իսկ Մուհամմեդ բեկի և Տողի Մելիք-Աբասի գլխավորությամբ գրոհում են իրանցիների վրա և ջախջախում թշնամու 2 ամրությունները[57]: Գիշերային գրոհներից պաշտպանվելու համար շահը իր ճամբարի շուրջը կառուցել էր ամուր պարիսպներ: Ըստ Միրզա Ջամալ Ջևանշիրի, «մի գիշեր Վարանդայի մահալի հետիոտն գունդը հարձակվում է և գրավում պարսիկների կառուցած ամրություններից մեկը և մեկ ժամվա ընթացքում կոտորելով գլխեթ բոլոր պաշտպաններին, մի քանիսին էլ իրենց հետ գերի տանում Իբրահիմ խանի մոտ[58]:

Իրանցի պատմագրի վկայությամբ, պարսկական հրետանին տեղադրված էր «Ֆաթհալի խան սանգյար» կոչվող վայրում և անընդհատ գնդակոծում էր ամրոցը[59]: Սակայն հայտնի է, որ Աղա Մուհամմադ խանի բանակը կռվում էր հնացած զենքերով: Մասնավորապես նրա հրացանները կրակում էին պատրույգը վառելուց հետո միայն, իսկ հրետանին մեծ մասամբ բաղկացած էր վտքը չափի հրանոթներից՝ «զամբուրակներից», այնպես որ անառիկ Շուշիի համար նրանք առանձնապես մեծ վտանգ չէին ներկայացնում[60]:

Շուշիի պաշարումը տևում է 33 օր: Այդ ընթացքում Աղա Մուհամմադ խանը ջանք չէր խնայում ամրոցի պաշտպաններին թե սպառնալիքներով ահաբեկելու և ծնկի բերելու, թե կռվով գրավելու համար[61]:

Ըստ Ռեզակուլի խանի, պարսկական բանակին ուժեղ դիմադրություն են ցույց տալիս նաև Ասկերանի պաշտպանները և Շուշիից 6 ֆարսանգ հեռավորության վրա ամրացած Իբրահիմ խանի եղբորորդիներ Մուհամմադ ու Ասադուլլահ բեկերը: Հակոբ Զաքարյանցը, մանրամասն նկարագրելով Աղա Մուհամմադ խանի արշավանքները Ղարաբաղ, նույնպես վկայում է Ասկերան ամրոցի համար տեղի ունեցող թեժ մարտերի մասին, որի զորապետն էր Հասան Ղուլի բեկը[62]: Աղա Մուհամմադ խանի հրամանով 5000 զինվորներով Ասկերանի վրա է շարժվում Մուսթոուֆի խան Դավալուն, որը սակայն չի կարողանում գրավել ամրոցը: Սինչոհո Մուհամմադ ու Ասադուլլահ բեկերի դեմ ուղարկված Փիրղուլի խան Շամբայաթին և Աբդ Ալլահ խան Ուսանլուն հաղթանակ են տանում և գերի վերցնում Ղարաբաղի խանի ազգականներին իրենց կանանց ու մերձավորների հետ[63]:

Վերոհիշյալ վկայություններից երևում է, թե ինչպես Ղարաբաղի բնակչությունը իր հայ մելիքների և թրքազգի ղեկավարների հետ ուժեղ դիմադրություն է ցույց տալիս Աղա Մուհամմադ խանի զորքերին: Ըստ երևույթին դրա հետևանքով առաջացած պարենի պակասությունն ու ղարաբաղցիների հարձակումներից կրած մարդկային զոհերն են հարկադրում Աղա Մուհամմադ խանին վտխել Ղարաբաղում ձմեռելու իր մտադրությունը[64] և շարունակել իր արշավանքը դեպի Վրաստան:

Շուշիի պաշարման ընթացքում երկրամասի գրեթե բոլոր խաները հպատակություն են հայտնում: Ներկայանում է Գանձակի Ջավադ խանը և տեղի հայ համայնքների ավագները՝ Մելիք-Մեջնունը, Մելիք-Ղուլին ու Մելիք-Իսմայիլը 600 ծառաներով ու նվերներով[65]: Մելիք-Մեջնունը Գանձակ էր փախել խուսափելու համար Ղարաբաղի խանի հալածանքներից[66], իսկ վերոհիշյալ Իսմայիլն ու Ղուլին հավանաբար տեղի հայ մելիքների ներկայացուցիչներն էին: Պատմական գրականության մեջ մեծ մասամբ շեշտվում է Գանձակի խանի ու Մելիք-Մեջնունի ջանասիրությունը Աղա Մուհամմադ խանին ծառայելու և դեպի Վրաստան արշավանքի հրահրելու հարցում[67]: Գանձակի խանությունը երկար ժամանակ Վրաստանի ու Ղարաբաղի տիրակալների պայքարի առարկան էր, և հաճախ հարկ էր վճարում նրանց երկուսին: Այնպես որ բնական է նրա հակումը դեպի Իրանի գահակալը, սա-

կայն պետք է հաշվի առնել նաև այն, որ Աղա Մուհամմադ խանը ավելի հիմնավոր դրդապատճառներ ուներ Վրաստան արշավելու համար, որոնց մասին վերը արդեն խոսել ենք:

Այսպես, չնայած թեժ մարտերին ու երկարատև պաշարմանը Աղա Մուհամմադ խանին չի հաջողվում գրավել Շուշին, սակայն Ղարաբաղը մեծ ավերածությունների է ենթարկվում: Ըստ Ռեզակուլի խանի, Ղարաբաղի Իբրահիմ խանը ի վերջո հնազանդություն է հայտնում Իրանի տիրակալին[68]: Սակայն պարսկալեզու պատմագրի այս տեղեկությունը այլ աղբյուրներով չի հաստատվում: Հեղինակը՝ ինքը, հետագայում հերքում է իր այդ միտքը՝ խոսելով նույն տարվա մեջ Աղա Մուհամմադ խանի զորքերի կրկին անգամ դեպի Ղարաբաղ արշավելու մասին: Հեղինակն ամենայն հավանականությամբ տուրք է տվել Իրանի պատմագրությանը հատուկ ներբողական ոճին և խեղաթյուրել փաստերը:

Աղա Մուհամմադ խանը ի վիճակի չլինելով նվաճել Շուշին՝ հեռանում է Ադդամի մոտակայքում գտնվող Խաթուն Արխ վայրը, որտեղ որոշ ժամանակ հանգիստ առնելուց հետո շարժվում է դեպի Գանձակ, այնտեղից էլ՝ Վրաստան: Սեպտեմբերի 12-ին պարսկական զորքերը գրավում են Թիֆլիսը և 9 օր սարսափելի ավերածությունների ու կողոպուտի ենթարկում Վրաստանի մայրաքաղաքը: Աղա Մուհամմադ խանը 15000 գերիներով ու հարուստ ավարով վերադառնում է Գանձակ, որոնց մեծ մասը այնտեղ թողնելով, հեռանում է Մուղանի դաշտավայրը[69]: Այստեղ գտնվելու ընթացքում Իրանի տիրակալը ևս մեկ անգամ ջանում է իրեն հնազանդեցնել Ղարաբաղի հանդուգն խանին: Իբրահիմ խանը նորից հրաժարվում է Աղա Մուհամմադ խանին ներկայանալ ու հպատակություն հայտնել: Նորից մեծ զորք է ուղարկվում Ղարաբաղ Աուլեյման խանի գլխավորությամբ, որը նոր ավերածություններ է կատարում այնտեղ և վերադառնում ահռելի ավարով, որը բարձած էր 10000 գրաստների վրա[70]: Նույն տարվա մեջ տեղի ունեցած այս երկրորդ արշավանքի մասին է թերևս խոսում նաև Հակոբ Զաքարյանց Շուշեցին, որը, ի տարբերություն այլ պատմագիրների, իր պատմական աշխատությունում խոսում է Աղա Մուհամմադ խանի Ղարաբաղ կատարած երեք արշավանքների մասին[71]:

Ջմեռը Մուղանում անցկացնելուց հետո, Աղա Մուհամմադ խանը այնքան հանկարծակի է հեռանում, որ Մուղանում են մնում բանակի վրանների, ավարի ու հիվանդների մեծ մասը, որոնցից շատերը ղարաբաղցիների ձեռքն են ընկնում[72]:

1796թ. Աղա Մուհամմադ խանը Խորասանում իր դեմ ծագած խռովությունները ճնշելուց հետո գահ է բարձրանում: Իսկ Ղարաբաղի Իբրահիմ խանն ու Վրաստանի Հերակլ թագավորը պատժում են Գանձակի խանին իրենց թշնամուն աջակցելու համար և վերականգնում իրենց գերիշխանությունը այդ խանության վրա:

Աղա Մուհամմադ խանի հաղթանակներն ու ավերածությունները Անդր-

կովկասում լրջորեն անհանգստացնում են ռուսական կառավարությանը, որը իր հովանավորության տակ էր առել Վրաստանը և ջանում էր իր ազդեցության տակ առնել նաև տարածաշրջանի մյուս երկրները: 1796թ. դեկտեմբերին ռուսական 2000-անոց մի զորագունդ ուղարկվում է Վրաստանը պաշտպանելու, իսկ Վ. Զուբովի գլխավորած ռուսական զորքը նույն թվականի մայիսից մինչև հոկտեմբերն ընկած ժամանակամիջոցում գրավում է գրեթե ողջ արևելյան Անդրկովկասը (իր Դերբենդ, Բաքու, Շամախի ու Գանձակ ամրոցներով) մինչև Ղարաբաղ: Երևանի, Նախիջևանի ու Ղարաբաղի խաները նույնպես ցանկություն են հայտնում դառնալու Ռուսաստանի հպատակը: Սակայն շուտով Ռուսաստանում կայսրերի փոփոխության հետևանքով ռուսական զորքերի առաջխաղացումը Անդրկովկասում կանգ է առնում: Այս հանգամանքից օգտվում է Աղա Մուհամմադ շահը և որոշում վերահաստատել իր տիրապետությունը Անդրկովկասյան երկրների վրա: Իրանից սպասվող նոր վտանգից վախեցած Երևանի Մահմեդ ու Նախիջևանի Քյալբասալի խաները հարուստ նվերներով ներկայանում են Արդեբիլում գտնվող շահին: Վերջինս տեղյակ լինելով նրանց ռուսական հակվածությանը՝ որոշում է պատժել: Երևանի խանը որոշ իշխանավորների միջնորդությամբ իր կյանքը հազիվ է փրկում, սակայն բանտարկվում է, իսկ Նախիջևանի խանը կուրացվում է[73]: Շահը հպատակություն է պահանջում նաև Վրաստանի Հերակլ թագավորից և Ղարաբաղի Իբրահիմ խանից, որոնք նորից չեն հնազանդվում:

Աղա Մուհամմադ խանի 1795թ. արշավանքից հետո ավերված Ղարաբաղը երկու տարի ևս քայքայվում է այնտեղ տիրող սովի ու ժանտախտի համաճարակի հետևանքով: Նման պայմաններում Ղարաբաղի խանը ի վիճակի չէր ուժեղ դիմադրություն ցույց տալ պարսկական մեծ բանակին, ուստի որոշում է փախուստի դիմել: Ռուս պատմագիր Բուտկովի վկայությամբ, տեղեկանալով Իբրահիմ խանի փախչելու մտադրության մասին, ինքը՝ շահը 12000 հեծյալներով շտապում է Ղարաբաղ[74]: Ռեզակուլի խանի հաղորդած տվյալների համաձայն շահը իր հետ վերցնում է ավելի քիչ զորք՝ 5000 հեծյալների և 3000 հետևակայինների մի գունդ[75]: Ցանկանալով կտրել Իբրահիմ խանի փախուստի ճանապարհը՝ Աղա Մուհամմադ շահը այնքան հապճեպ է անցնում Արաքսը, որ որոշ տվյալներով իր զինվորներից կորցնում է 2000 հոգու[76]: Շահին չի հաջողվում բռնել Իբրահիմ խանին, որը իր ընտանիքի ու մերձավորների հետ արդեն հեռացել էր Դաղստան: Նրա հետևից Շուշին լքել էր նաև նրա բնակչության մեծ մասը: Այնպես որ, երբ շահը իր զորքով առանց որևէ խոչընդոտի ամրոց է մտնում, այնտեղ մնացել էր ընդամենը 200 ընտանիք[77]:

Շուշի մտնելուց մի քանի օր անց Աղա Մուհամմադ շահը սպանվում է իր ննջարանում սեփական ծառաների ձեռքով[78]: Ժողովրդական ավանդություններում պատմվում է, որ չնչին մի զանցանքի համար շահը կտրել է տալիս իր սպասավորներից մեկի ականջները, որից հետո նաև սպառնում առա-

վոտյան մեկ այլ սպասավորի հետ միասին մահապատժի ենթարկել նրան: Վախեցած սպասավորները գիշերը նրան իր ննջարանում սպանում են[79]: Սակայն մի քանի այլ աղբյուրներում վկայություններ կան նաև նրա զորավարներից մեկի՝ Սադեղ խան Շաղաղիի կողմից, շահի դեմ դավադրություն կազմակերպված լինելու մասին, որի իրական լինելը ավելի հավանական է թվում:

Ռուս պատմագիր Բուտկովը այդ դեպքերի վերաբերյալ հետևյալն է գրում. «Աղա Մուհամմադ խանի մերձավորներից մի քանիսը որոշելով նրա դեմ դավադրություն կազմակերպել՝ այդ մասին հայտնում են Սադեղ խան Շաղաղիին՝ Աղա Մուհամմադ խանի զորավարներից մեկին: Սադեղ խան Շաղաղին աղրբեջանցի խաների գաղտնի համաձայնությամբ հաճույքով աջակցում է այդ նախաձեռնությանը՝ հուսալով այդ կերպ հարուստ ավար ձեռք բերել: Այսպես, հունիսի 4-ին ծառաները մտնելով շահի ննջարանը, գլխատում են նրան: Սադեղ խանը մոտակայքում գտնվելով՝ ներս է վազում, հավաքում շահական գանձերը և իր զորքերով հեռանում ... դեպի Թավրիզ»[80]:

Համանման վկայություններ կան նաև հայկական և օտար աղբյուրներում[81]: Այս վկայությունների հավաստիության օգտին են խոսում նաև սպանությանը նախորդող իրադարձությունները: Աղա Մուհամմադ շահը աչքի էր ընկնում իր դաժանությամբ և կասկածամտությամբ: Արշավանքի նախօրյակին շահի կասկածամտության զոհն էին դարձել իր բարձրաստիճան պաշտոնյաներից Միրզա Շաֆին, Խոյի ու Թավրիզի կառավարիչներ Հուսեյն Ղուլի և Ջաֆար Ղուլի խաները Դումբուլիների տոհմից[82]: Իրենց ռուսական կողմնորոշման համար անողոք պատժի էին ենթարկվել Երևանի ու Նախիջևանի խաները: Շուշիում գտնվելու ժամանակ նրա պահանջով ներկայանում է Գանձակի Ջավադ խանը, որը ձերբակալվում է իր բերդը ռուսական զորքերին հանձնելու համար: Ձերբակալվում և որպես գերի Շուշի են բերվում Բաքվի Հուսեյն խանը, Իբրահիմ խանի վեզիր Մոբա Փանահ Վաղիֆը[83]: Պարսկական զորքերը Շուշի մտնելուն պես սկսում են կողոպտել այնտեղ մնացած բնակիչներին: Հատկապես ծանր ռազմատուգանք է դրվում Սելիք-Ջումշուդ Շահնազարյանի վրա[84]: Քաղաք մտած պարսկական բանակը նեղություն էր կրում պարենի պակասության հետևանքով և ստիպված էր այն հայթայթել բնակիչներին թալանելու միջոցով: Շուշիում գտնվելու ժամանակ Աղա Մուհամմադ շահի դեմ դժգոհություն է ծագում ինչպես բանակի հասարակ զորականների, այնպես էլ նրանց ղեկավարների շրջանում[85]:

Այնպես որ, Սադեղ խան Շաղաղին, ըստ երևույթին, օգտվում է շահի դեմ տիրող համընդհանուր դժգոհությունից և շահի դեմ դավադրությունն իրագործելուց հետո շտապում իրականացնել Իրանի գահին տիրելու իր մտադրությունները:

SUMMARY

During the reign of the Iranian Shah Nadir (1735-1747), the five Armenian principalities (melikutjiun) of Karabagh were united in a single administrative unit called "Khamsa-ji melikutjunner" (arab. -five). After the death of Nadir Iranian state was weakened and there arose a great number of independent khanates in the territory of Atrpatakan and Eastern Transcaucasia. One of the strongest khanates of the Transcaucasia in the second half of the XVIII century was Karabagh. The muslim khans of Karabagh who originated from the Turkish tribe of Javanshir, after a persisting struggle subdued the Armenian principalities of Khamsa. Nevertheless, the Armenian meliks (landlords) and the Armenian dense population of Karabagh played a significant role in the social-political life of their country during the second half of the XVIII century. The Armenian meliks with their Armenian subjects took part in the reconstruction of the fortress Shushi (from 1783 to 1789) and also in the military operations of muslim khans against neighbouring countries.

In the early 90, s Agha Muhammad khan, who was one of the powerful claimants upon the crown of Iranian shahs, had aimed to spread its rule over Atrpatakan and Transcaucasian countries. Ibrahim khan of Karabagh and Heracle, the king of Georgia, rejected the demands of Agha Muhammad khan concerning their peaceful submission. Therefore, Agha Muhammad khan in 1795 organised an expedition into Kharabagh and other Transcaucasian countries. But the governor of Iran met the stubborn resistance of Ibrahim khan, Armenian meliks and their subjects. Though many settlements of Karabagh were destroyed by Persian troops, the fortress of Shushi was not captured. The detachments of Armenian meliks and muslim begs (landowners) stroke the Persians and caused damages to their troops. 33 days Persians besieged Shushi, but were unable to seize it as well as the fort of Askeran. Starving from the lack of provision and the thrusts of the people of Karabagh, Agha Muhammad khan was forced to leave that country for Georgia.

The next two years Karabagh starved from the famine and plague which were the consequences of its terrible devastation by Persian troops. Therefore, when in 1797 Agha Muhammad shah once again marched into Karabagh, Ibrahim khan could not resist his army and left for Jar. This time the army of Agha Muhammad shah entered the fortress of Shushi without any obstacle. But soon after his triumphial entrance into the fort he was killed there by his servants. After a careful study of historical sources the author concluded that it was the result of a plot organized against him by one of the commanders of his army, Sadegh Khan Shaghaghi.

ԾԱՆՈԹԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

1. Ժողովրդի պատմություն, հ. 4, Երևան, 1972, էջ 186.

2. Петрушевский, Очерки по истории феодальных отношений в Азербайджане и Армении, Л., 1943, с. 86.

3. Ստ. Կոստանյանց, Պատմություն Արցախի, Մ. Մաշտոցի անվան Մատենադարան, ձեռ. 7822, 7823: Բաֆֆի, մելիքությունները», Երկերի ժողովածու, հ 10, Երևան, 1964, էջ. 161-383.

4. Мирза Адигезаль-бек, "Карабаг-наме", Баку, 1950; Мирза Джамаль Джеваншир Карабаги, "История Карабага", Баку, 1959; Бутков, Материалы для новой истории Кавказа с 1722 по 1803, ч. 2; СПб., 1869.

5. Армяно-русские отношения, т . 3, Ер., 1978; т. 4, Ер., 1990.

6. А. Р. Иоаннисян, "Россия и армянское освободительное движение в 80-х годах 18-ого столетия", Ер., 1947; "Иосиф Эмин", Ер., 1945.

7. Արդ Ստ-Ռազզակ Դումբուլի «Մասսեր-ե սուրբանին», Թավրիզ 1828, (պրսկ.); Ռեզակուլի-խան Հեդայաթ «Ռոուզաթ-աս-Սաֆա-ե Նասերի» Թեհրան 1339հ. թ., (պրսկ.):

8. Դեհխոդա Ա. Ա., «Լողաթ-նամե» (պրսկ. հանրագիտարան-բառարան), Թեհրան 1946-1959, հ. 27, էջ 157.

9. Ռեզակուլի խան Հեդայաթ, նշվ. աշխ., հ.1, 1338, էջ 810.

10. Հմմտ.՝ Հայ ժողովրդի պատմություն, հ.5, Եր., 1974, էջ 15 և Ա. Տ. Երեմյան, «Հայաստանը ըստ «Աշխարհացույցի», Երևան 1963, էջ 109:

11. А. Бакиханов, "Гюлистан-Ирам", Баку, 1929, с. 127, 128; М. Нерсисян, Из истории русско-армянских отношений, кн. 1, Ер., 1956, с. 265; Армяно-русские отношения в 18-ом веке, т. 4, Ер., 1990, с. 213.

12. «Վրաց աղբյուրները Հայաստանի ու հայերի մասին», հ. Գ, Եր., 1955, էջ 130, 139, 169-170.

13. В. Н.Левиатов, Очерки из истории Азербайджана в 18-ом веке, Баку, 1948, с.121.

14. Ռեզակուլի-խան Հեդայաթ, նշվ. աշխ., հ. 9, էջ 34.

15. Այդ արշավանքների մասին տես՝ «Վրաց աղբյուրները...», հ. Գ, էջ 188, Դիվան Հայոց պատմության, հ. Գ, Թիֆլիս, 1894, էջ 57, 58.

16. Դիվան Հայոց պատմության, գիրք Ա, (նոր շարք), Ղուկաս Կարնեցի 1780-1785թթ, Եր., 1984, էջ 56, 161.

17. Бутков, ук.соч., ч. 2, с. 176.

18. Левиатов, ук. соч. с. 157, Бутков, ук. соч. ч. 2, с. 114.

19. «Վրաց աղբյուրները, հ. Գ, էջ 189.

20. Грамоты и другие исторические документы относящиеся до Грузии, т. 2, вып. 2, СПб, 1902, с. 19-20.

21. М. Нерсисян, ук. соч., с. 267, 275; Армяно-русские отношения..., т. 4, с. 222.

22. Акты Кавказской Археологической Комиссии, т. 2, Тифлис, 1866, с. 623; Кавказская старина, Тифлис, 1872, н. 2, с. 35.

23. Армяно-русские отношения..., т. 4, с. 213.

24. М. Нерсисян, ук. соч., с. 265.

25. Армяно-русские отношения..., т. 4, с. 222.

26. Грамоты и другие..., ч. 1, СПб, 1891, с. 434.
27. А. Р. Иоаннисян, ук. соч., с. 190-191.
28. Армяно-русские отношения..., т. 4, с. 252.
29. Միրզա Յուսուֆ Ներսեսով «Թարիխ-ի Սաֆի», 86 ա), ՎՀ, Կեկելիձեի անվ, ձեռ. ինստ., ձեռ. Ռ-195.
30. Н. Н. Дубровин, История войны и владычества русских на Кавказе, т. 3, ., 1886, с.7.; Վալիները Իրանի պետության բարձրագույն իշխանավորներն էին՝ սահմանամերձ շրջաններից 4-ի կառավարիչները: Արաբիստանը կամ Խուզիստանը Իրանի հարավ-արևմուտքում գտնվող գետաբերուկներից առաջացած հարթավայրային շրջանն էր, իսկ նրա կառավարիչներն էին բարձրագույն սեիդները: Իրանական Քրդստանի կամ Լուրիստանի մայրաքաղաքն էր Քերմանշահը, իսկ կառավարիչները ծագում էին քրդական Արդելանի տոհմից (տես՝ Մինորսկի, Սեֆյան շրջանի կառավարական համակարգը ըստ «Թեզքիրաթ-ալ-մուլուք», (պրսկ.), Թեհրան 1338հ. թ., էջ 76; նաև В. Бартольд, Историко-географический обзор Ирана, СПб., 1903, с.123, 131.
31. Ռեզակուլի-խան Հեդայաթ, նշվ. աշխ., հ. 9, էջ 234; «Օրինակք գրութեանց Ղուկաս կթղկ. Կարնեցվոյ», Մ. Մաշտոցի անվան Մատենադարան, ձեռ. 4501, էջ 369 ա):
32. Ռեզակուլի-խան Հեդայաթ, նշվ. աշխ., հ. 9, էջ 235; «Օրինակք գրութեանց...», էջ 364 բ):
33. «Օրինակք գրութեանց...», էջ369 ա), Ռեզակուլի-խան Հեդայաթ, նշվ. աշխ., էջ 236.
34. Վ.Ռ. Գրիգորյան, Երևանի խանությունը 18-րդ դարի վերջին, Երևան 1958, էջ 148.
35. Վ. Ռ. Գրիգորյան, նշվ. աշխ., էջ 150.
36. Մ.Յ. Ներսեսով, նշվ. ձեռ., էջ 91 ա).
37. Бутков, ук. соч., ч. 2, с. 326.
38. Ռեզակուլի-խան Հեդայաթ, նշվ. աշխ., հ. 9, էջ 253.
39. Мирза Джамаль, ук. соч., с. 78.
40. Бутков, ук. соч., ч. 2, с. 332.
41. Ռեզակուլի-խան Հեդայաթ, նշվ. աշխ., հ. 9, էջ 261.
42. Ռուս պատմագիր Բոսոկովը նշում է, որ Աղա Մուհամադ խանի բանակը բաղկացած էր որոշ տվյալներով 50000, որոշ տվյալներով էլ՝ 100000 զինվորներից, տես՝ (Бутков, ук. соч., ч. 2, с. 331); Պատմաբաններից Կոպենեցովայի տվյալներով 60000 (Н. А. Кузнецова, Иран в первой половине 19-го века, М., 1983, с. 265); իսկ Լևիատովի՝ 80-85000 զինվորներից, տես՝ (В. Н. Левиатов, ук. соч., с. 167).
43. Թուրքական աղբյուրները Հայաստանի, հայերի և Անդրկովկասի մյուս ժողովուրդների մասին, հ. Ա, Եր., 1964, էջ 286; Бутков, ук.соч ., с. 332.
44. Бутков, там же.
45. Վ. Ռ. Գրիգորյան, նշվ. աշխ., էջ 162.
46. Н. Н. Дубровин, ук. соч., т. 3, с. 26.
47. Հակոբ Զաքարյանց, «Պատմություն գավառին Արցախու», Մ. Մաշտոցի անվան Մատենադարան, ձեռ. 2734, էջ 6.
48. Լեռ, Երկերի ժողովածու, հ. 3, Եր., 1973, էջ 386.
49. В. Н. Левиатов, ук. соч., с. 168.
50. Ռեզակուլի խան Հեդայաթ, նշվ. աշխ., հ. 9, էջ. 263-264.
51. Մ. Յ. Ներսեսով, նշվ. ձեռ., էջ 93 ա); Վարանդայի դաշտերից է, տես՝ Ե. Լա-

լայան, Երկերի ժողովածու, հ. 2, Եր., 1988, էջ 16 .

52. Ռեզակուլի խան Հեդայաթ, նշվ. աշխ., հ. 9, էջ.264-265.

53. Հակոբ Զաքարյանց, նշվ. ձեռ, էջ 6. Ըստ երևույթին այս պատճառով է հետագայում այդ ձորը ստանում «Խազնադարասի» (թրք. գանձերի որ) անվանումը:

54. Грамоты и другие исторические документы..., т. 2, вып. 2, с. 93.

55. Мирза Джамаль, ук. соч., с. 80.

56. Ռեզակուլի խան Հեդայաթ, նշվ. աշխ., հ. 9, էջ 266.

57. Ахмед-бек Джеваншир, О политическом существовании Карабагского ханства, Шуша, 1901, с. 24.

58. Мирза Джамаль, ук. соч., с. 80.

59. Ռեզակուլի խան Հեդայաթ, նշվ. աշխ., հ. 9, էջ 267.

60. Մ. Յ. Ներսեսով, նշվ. ձեռ., էջ 94 ա); Ռեզակուլի-խան Հեդայաթ, նշվ.աշխ., հ.9, էջ.270.

61. Իրանի տիրակալը սպառնալից նամակներ էր հղում Իբրահիմ խանին, որոնցից մեկում ասում է, թե «Խազնադարասի ձորը իմ հեծյալների մտրակներով կլցնեմ և ամրոցը կգրավեմ (տես՝ Մ. Յ. Ներսեսով, նշվ. ձեռ. էջ 93 բ)), իր մեկ այլ նամակում էլ մեջ է բերում Սահդ Մուհամմադ Շիրազիի հետևյալ բանաստեղծական երկտողը՝ Ճակատագրի երկնակամարից քարեր են թափվում, իսկ դու թաքնվել ես ապակե բերդում (պրսկ. շիշե նշանակում է ապակի), տես՝ Мирза Адигезаль-бек, ук. соч., с. 77.

62. Հակոբ Զաքարյանց, նշվ. ձեռ. էջ 16-17.

63. Ռեզակուլի խան Հեդայաթ, նշվ. աշխ., հ. 9, էջ 267.

64. Грамоты и другие исторические документы..., т. 2, вып. 2, с. 96.

65. Ռեզակուլի- խան Հեդայաթ, նշվ. աշխ., հ. 9, էջ 268.

66. Бутков, ук.соч. ч.2, с. 28.

67. Мирза Джамаль, ук. соч., с. 80; П. Г. Бутков, ук.соч., ч. 2, с. 338.

68. Ռեզակուլի-խան Հեդայաթ, նշվ. աշխ., հ. 9, էջ 268.

69. Грамоты и другие исторические документы..., т. 2, вып. 2, с. 135.

70. Ռեզակուլի-խան Հեդայաթ, նշվ. աշխ., հ. 9, էջ 274.

71. Հակոբ Զաքարյանց, նշվ. ձեռ. էջ. 6, 14, 17.

72. Грамоты и другие исторические документы..., т. 2, вып. 2, с. 155.

73. Վ. Ռ. Գրիգորյան, նշվ. աշխ., էջ 181.

74. Бутков, ук. соч., ч. 2, с. 428.

75. Ռեզակուլի-խան Հեդայաթ, նշվ. աշխ., հ. 9, էջ 293 .

76. Грамоты и другие исторические документы..., т. 2, вып. 2, с. 170.

77. Бутков, ук.соч ., ч. 2, с. 428.

78. Աղբյուրների տեղեկությունները շահի սպանության օրվա վերաբերյալ միմյանցից տարբերվում են: Ըստ Բուտկովի, սպանությունը տեղի է ունեցել հունիսի 4-ին (տես՝ Бутков, ук. соч., ч. 2, с. 430); ըստ Բակիխանովի՝ մայիսի 12-ին (տես՝ А. Бакиханов, ук. соч., с. 147); Մելիք Ջումշուդ Շահնազարյանի վկայությամբ շահը սպանվել է հունիսի 6-ին (տես՝ Армяно-русские отношения..., т. 4, л.461), իսկ անգլիացի ուսումնասիրող Փիքոթի՝ մայիսի 14-ին (տես՝ Новая история Ирана, Хрестоматия, М. 1988, с. 65, հղումը՝ Picault, Histoire des revolutions de perse pendant la duree du dix-huitiemme siecle de l'ere chretienne, t. 1, 2, P. 1810, p. 410-418) .

79. Աղա Մուհամմադ շահի սպանությանը վերաբերող ժողովրդական ավանդությունները գրի են առել Դուրովինը, Բաֆֆին, և 19-րդ մյուս պատմագիրները (տես՝ Н. Н. Дубровин, ук. соч., т. 3, с. 209-212; Բաֆֆի, նշվ.աշխ., էջ 273; Мирза Джа-

маль, ук. соч., с. 134; Мирза Адигезаль-бек, ук. соч., с. 87.

80. Бутков, ук. соч., ч. 2, с. 430.

81. Դիվան Հայոց պատմության, գիրք Ա-Բ, Թիֆլիս, 1893, էջ 32; գիրք Ժ, Թիֆլիս, 1912, Մանր Մատենագիրք, էջ 448; Գ. Շիրմազանյանց, «Ճանապարհորդություն Հայաստանում», «Արարատ» ամսագիր, Էջմիածին, 1877, h.10, էջ 332; Picault, Ch., նշվ. աշխ. էջ. 410-418; Ахме-Джеваншир, О политическом существовании Карабагского ханства, Баку, 1961, с. 81-82:

82. Бутков, ук. соч., ч. 2, с. 428-430.

83. Իբրահիմ խանի վեզիր Մոլլա Փանահ Վաղիֆի ձերբակալման հանգամանքների մանրամասն քննությունը տես՝ А. Дадашзаде, Певец жизни, Баку, 1968, с. 30-34.

84. Գ. Շիրմազանյանց, նշվ. աշխ., էջ 306.